# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ոսկեվազ, (0232)61292 voskevaz.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 11

### ՈՍԿԵՎԱԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ /ՏԱՊ/ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով

ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ոսկեվազ համայնքապետարանի 2018թվականի Տարեկան Աշխատանքային պլանը:Պլանը կցվում է:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ
2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՏԻԳՐԱՆ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
5. ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱՐՈՆ

**Համայնքի ղեկավար՝** ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱԶ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ոսկեվազ, (0232)61292 voskevaz.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 12

## ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ և ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին կետի, 36-րդ ենթակետի պահանջներով.

ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ոսկեվազ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների բարեկարգման կարգը, ըստ հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ
2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՏԻԳՐԱՆ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
5. ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱՐՈՆ

Համայնքի ղեկավար ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2018ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի

N12 ՈՐՈՇՈՒՄ

ԿԱՐԳ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1.Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ)սահմանվում է Ոսկեվազ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը,ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2.Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր,որն ուղղված է Ոսկեվազ համայնքի սանիտարական վիճակի եվ գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը,բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը,ինճպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը,որոնք իրականացվում են անշարժ գույքի ընթացիկ նորոգման,ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման եվ բարեկարգման միջոցով:

3.Սույն կարգը տարածվում է Ոսկեվազ համայնքի վարչական տարածքում տեղակայված /գտնվող/՝

1)առանձին տեղակայված հասարակական,արտադրական եվ այլ ոչ բնակելի նշանակության շենքերի,շինությունների եվ կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ)սեփականատերերի կամ տիրապետողների վրա.

4.Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1)անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման եվ դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը:

2)անհրաժեշտ լուսավորություն համայնքի փողոցներում:

3)կանգառի կառուցում եվ շրջակայքի բարեկարգում:

5.Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1)ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մքրումը:

2)մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա.ապահոված լինի տեսանելի մաքրություն:

6.Ոսկեվազ համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացվում է անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

7.Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ոսկեվազ, (0232)61292 voskevaz.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 13

## ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին ենթակետի և ,, բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.

ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ոսկեվազ համայնքի 2017թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման հաղորդումը ընդունել ի գիտություն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ
2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՏԻԳՐԱՆ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ
5. ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱՐՈՆ

Համայնքի ղեկավար՝ ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

| hh | | Պլան | Փաստացի | Կատարման տոկոս |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 1814.3 | 7848.8 | 99.3 |
| 2 | գույքահարկ | 4439.7 | 7848.8 | 176.8 |
| 3 | Տեղական տուրք | 50.0 | 76.0 | 152.0 |
| 4 | Հողի վարձավճար | 94.0 | 75.0 | 79.8 |
| 5 | աղբահանություն | 35.5 | 35.5 | 100 |
| 6 | Ուսման վարձ(ծնողական) | 925.0 | 1660.4 | 179.5 |
| 7 | դոտացիա | 17704.0 | 17704.0 | 100 |
| 8 | սուբվենցիա | 666.8 | 885.5 | 133.2 |

ՈՍԿԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ